[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
3	Հուլիս	2019 թ.		Բ	8594515685
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
3	Հուլիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 6 3 6 7 8 1
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ N 2470103343210000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (Ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N N Ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծանրաքաշը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 22150217 քրեական գործով դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր փորձաքննություն	հատ	1	450000		450000
Ընդամենը						450000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրություն, անուն, ազգանուն)

03/07/2019 20:35:45

ՈՐՈՇՈՒՄ

Դատատնտեսագիտական, դատահաշվապահական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

31 հոկտեմբերի 2017թ. ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Վ.Ղ.Մելքոնյանս, քննարկելով վարույթիս թիվ 22150217 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

16.01.2017թ.-ին Շիրակի մարզի դատախազությունից ոստիկանության Ամասիայի բաժին է ստացվել Շիրակի մարզի Արփի համայնքի Ծաղկուտ գյուղի բնակիչ Ռուբեն Թովմասյանի, Արթուր Խեչոյանի, Վլադիմիր Հարոսյանի, Ներսես Աղաբաբյանի և այլ բնակիչների դիմումը այն մասին, որ Ծաղկուտ գյուղի նախկին ղեկավար Արզուման Սուքիասի Կարախանյանն իր լիազորությունները չարաշահելու միջոցով համայնքին պատկանող գույքը և դրամական միջոցները յուրացրել և վատնել է Լուսինե Հովակյանը՝ 2005թ.-ին, Նելի Պողոսյանը՝ 2006թ.-ին, Գայանե Դավթյանը՝ 2012թ.-ին և Կիմա Խաչատրյանը նշանակվել են Ծաղկուտի գյուղապետարանում տարբեր պաշտոնների, աշխատանքի չեն հաճախել և կարճ ժամանակ անց հիշյալ անձանց տրամադրվել է ֆիզարձակուրդ: Սամվել Կարախանյանը նշանակվել է որպես օպերատոր, սակայն Հայաստանից հիմնականում բացակայել է, գյուղապետարանի հաշվեկշռում գտնվող 1,5 մլն դրամ արժողության մետաղական կոնստրուկցիաները կեղծ աճուրդով վաճառվել են ընդամենը 94500 դրամով , նույն եղանակով օտարվել են նաև այլ շինություններ, գյուղապետարանի գործող գրասենյակը 200.000 դրամով վերանորոգելուց հետո 31900 դրամով վաճառվել է համայնքի ղեկավարի կնոջը՝ Լուիզա Չոգանդարյանին, որն էլ այն վաճառել է 2000 ԱՄՆ դոլարով , 2005թ.-ին ձեռք է բերվել ՎԱԶ 21063 մակնիշի ավտոմեքենա , որը շահագործվել է ընդամենը 4 տարի, չնայած ավտոմեքենայի համար բյուջեից կատարվող կանոնավոր հատկացումներին, 2009թ.-ին համայնքին տրված Չինվան 80 մակնիշի և 2014թ.-ին տրված ՄՏԶ 82 մակնիշի Բելոռուս տրակտորները իրենց գործիքներով օգտագործվել է բացառապես գյուղապետի անձնական կարիքների համար, խոտհարքերի և արոտավայրերի շահագործումից հավաքված գումարները յուրացվել են, առանց մրցույթի վարձակալության են հանձնվել տարբեր հողատարածքներ և այլն :

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է , որ Արզուման Կարախանյանը, նշանակվելով Շիրակի մարզի Ծաղկուտ գյուղի ղեկավար, 1999թ.-ից անցել է իր պաշտոնեական լիազորությունների կատարմանը մինչև 2016թ.-ը և Շիրակի մարզի Արփի համայնքի ձևավորումով ազատվել զբաղեցրած պաշտոնից: Հիշյալ ժամանակաընթացքում Ծաղկուտ գյուղի գյուղապետարանում տարբեր քաղաքացիների է ընդունել աշխատանքի, որոնց աշխատավարձ չի վճարել :

Այսպես .

Լենա Հակոբյանը 1997թ.-ից Ծաղկուտի գյուղապետարանում աշխատել է գրադարանավարուհի, այնուհետև հավաքարար, որին 2009թ.-ին մի քանի ամսով հավաքարարի պաշտոնում իր ազատվելուց հետո փոխարինել է հարսը՝ Դրախտուհի Մխիթարյանը. Անդրանիկ Խաչատրյանը 2005-2007թթ.-ին աշխատել է Ծաղկուտի գյուղապետարանում որպես վարորդ, իսկ 2009թ.-ից՝ որպես ջրագծի բանվոր, սակայն մինչ օրս չգիտի, թե աշխատանքից երբ է ազատվել : Արզուման Կարախանյանի՝ որպես Ծաղկուտ գյուղի ղեկավարի պաշտոնավարումից հետո Լենա Հակոբյանը հավաքարարի

պարտականությունները կատարելու համար աշխատանքի է հաճախել տարվա ընթացքում մոտ 8-9 անգամ, իսկ Անդրանիկ Խաչատրյանը նորմալ հաճախելով աշխատավայր՝ կատարել է իր աշխատանքային պարտականությունները : Լենա Հակոբյանը, Դրախտուհի Մխիթարյանը և Անդրանիկ Խաչատրյանը աշխատավարձ ընդհանրապես չեն ստացել, չնայած աշխատավարձերի վճարման մի քանի տեղեկագրերում Լենա Հակոբյանը և Անդրանիկ Խաչատրյանը անձամբ ստորագրել են իրենց անվան դիմաց: 2012թ.-ից, երբ գյուղապետարանի աշխատակիցները աշխատավարձերը սկսել են ստանալ քարտային համակարգով, Լենա Հակոբյանը բանկի համապատասխան մասնաճյուղից ստանալով իր անվամբ հաշվառված աշխատավարձի քարտը և գաղտնաբառի կտրոնը դրանք հանձնել է Արզուման Կարախանյանին: Վերջինս աշխատավարձի վարձավճարները պահել է որպես գյուղապետարանում մուծվող հողի և այլ հարկեր, սակայն մուծման որևէ անդորրագրեր նրանց չի տրամադրել :

Լենա Հակոբյանին, Դրախտուհի Մխիթարյանին և Անդրանիկ Խաչատրյանին ներկայացվել է նյութերում առկա միայն 2007թ. նոյեմբեր, դեկտեմբեր, 2009թ.-ի հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, 2010թ.-ի հունվար, ապրիլ, մայիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և արձակուրդային, 2011թ. հունվար ամիսների աշխատավարձերի վճարման տեղեկագրերի պատճենները, որոնցից Լենա Հակոբյանը հայտնել է, որ 2009թ.-ի հուլիս, 2010թ.-ի ապրիլ, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, 2011թ.-ի հունվար ամիսների տեղեկագրերում է միայն իր անվան դիմաց դրված ստորագրությունները իրենը, իսկ մնացած ամիսների տեղեկագրերում իր անվան դիմաց դրված ստորագրությունները կեղծված են և իրենը չեն:

Դրախտուհի Մխիթարյանը և Անդրանիկ Խաչատրյանը հայտնել են, որ ներկայացված աշխատավարձերի վճարման տեղեկագրերում իրենց անվան դիմաց դրված ստորագրությունները կեղծված են և իրենցը չեն:

Արզուման Կարախանյանը, տեղյակ լինելով Լենա Հակոբյանի և Դրախտուհի Մխիթարյանի կողմից աշխատանքային պարտականությունները նորմալ չկատարելու հանգամանքի մասին , ոչ միայն չի լուծել վերջիններիս հետ կնքած աշխատանքային պայմանագրերը և չի ազատել աշխատանքից , այլ նաև ներկայացրել է վճարման, որի հիման վրա Լենա Հակոբյանի, Դրախտուհի Մխիթարյանի, անվամբ նշված ժամանակահատվածներում ելքագրվել է ընդհանուր 535.976 դրամ աշխատավարձի վարձավճար, իսկ Անդրանիկ Խաչատրյանի անվամբ՝ աշխատավարձի 181.975 դրամ վարձավճար, այսինքն՝ ընդհանուր ելքագրվել է 717.951 դրամ աշխատավարձի վարձավճար:

Այսպիսով, Արզուման Կարախանյանը, 1999թ.-ից մինչև 2016թ.-ը աշխատելով որպես ՇՄ Ծաղկուտ համայնքի ղեկավար, հանդիսացել է պաշտոնատար անձ և պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում շահադիտական նպատակով ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելով Լենա Հակոբյանի , Դրախտուհի Մխիթարյանի և Անդրանիկ Խաչատրյանի փաստացի աշխատած ժամանակահատվածի վերաբերյալ կազմել է կեղծ փաստաթղթեր և դրանք ներկայացնելով վճարման՝ ելքագրել վարձավճարներ և յուրացրել:

2017թ. հունվարի 26-ին ոստիկանության Ամասիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և 314 հոդվածի 1-ին մասով հարուցվել է 22150217 քրեական գործը և ըստ ենթակայության ուղարկվել Շիրակի մարզային քննչական վարչություն:

2017թ. հունվարի 30-ին 22150217 քրեական գործն ստացվել է Շիրակի մարզային քննչական վարչություն, քրեական գործն ընդունվել է վարույթ, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում զննվել են Ծաղկուտի գյուղապետարանի հրամանագիրքը, <<2004թ-ի աճուրդային հանձնաժողովի կազմը, նիստերի արձանագրությունն.>> գիրքը, Ծաղկուտի գյուղապետարանի թիվ 5 հրամանագիրքը, Ծաղկուտ համայնքի ավագանու

արձանագրությունների մատյանը, <<Ավագանու նիստերում քննարկված հարցերի ցանկը՝ 153 էջից>> վերնագրով մատյանը և Ծաղկուտ համայնքի ղեկավարի որոշումների մատյանը:

Նկատի ունենալով, որ քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզելու նպատակով անհրաժեշտ են դատական տնտեսագիտության, հաշվապահության և ապրանքագիտության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածով, 243-246-րդ հոդվածներով, 248-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1.Վարույթիս թիվ 22150217 քրեական գործով նշանակել դատատնտեսագիտական, դատահաշվապահական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Հույս և օրենք>> ՍՊ ընկերության փորձագետներին՝ նրանց նախազգուշացնելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

2. **Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը՝**

- 1999 թվականից սկսած մինչ 2016 թվականն ընկած ժամանակահատվածում որքան գումար է կազմել Ծաղկուտ համայքի բյուջեն, ինչ գումարներից է ձևավորվել /ըստ տարիների/, յուրաքանչյուր տարի համապատասխան կարգով բյուջեի ծախսումները հաստատվել և այդ ծախսումներն օրինական ձևակերպումներ ստացել են, թե ոչ:

- Ծաղկուտ համայնքի 1999-2016 թվականների հաշվետու ժամանակահատվածում կազմված և ավագանու կողմից հաստատված եկամուտների հաշվետվություններում ըստ խմբերի և ենթախմբերի արտացոլված եկամուտները սահմանված կարգով համայնքում փաստաթղթավորվել և ստացել են համապատասխան հաշվապահական ձևակերպումներ, թե ոչ, եթե ոչ, ապա ինչպիսի խախտումներ են թույլ տրվել և ում կողմից: Միաժամանակ անհրաժեշտ է պարզել, թե ըստ խմբերի և ենթախմբերի, որ եկամուտների գծով պլանը չի կատարվել և դա զուտ հաշվապահական և տնտեսական տեսանկյունից ինչով է բացատրվում:

- Նույն ժամանակահատվածում կազմված հաշվետվություններում ըստ խմբերի և ենթախմբերի արտացոլված եկամուտները սահմանված կարգով փաստաթղթավորվե՞լ և ստացել են համապատասխան հաշվապահական ձևակերպումներ, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչպիսի խախտումներ են թույլ տրվել և ում կողմից:

- Ստուգել Ծաղկուտ գյուղի համայնքապետարանի 1999-2016 թվականներին կատարված ֆինանսական ծախսերը՝ ըստ խմբերի և ենթախմբերի, դրանց հաշվապահական ձևակերպումները և հիմնավորվածության օրնականությունը:

- 1999-2016 թվականների ընթացքում Ծաղկուտ համայնքը բյուջեից համագյուղացիներին կամ կազմակերպություններին որքան օգնություն, նվերներ է հատկացրել, նշված գումարներն օրինական ճանապարհներով ֆինանսա-հաշվապահական ձևակերպումներ ստացել են, թե ոչ /կան ավագանու համապատասխան որոշումներ և ֆինանսական օգնություն ստացող քաղաքացիները հանդիսացել են արդյոք սոցիալապես անապահով ընտանիքներ/:

- 1999 թվականից սկսած մինչ 2016 թվականն ընկած ժամանակահատվածում Ծաղկուտ համայնքին պետական կամ այլ միջոցներով ինչ գույք է հատկացվել, ինչ անհատական հատկանիշներով, ինչ փաստաթղթերով, այդ ժամանակահատվածից սկսած համայնքում գույքագրումներ կատարվել են, թե ոչ, դրանց արդյունքում ինչպիսի պակասորդներ են հայտնաբերվել, ստացված գույքը փոխարինվել, օտարվել է, թե ոչ, եթե այո, ապա ում կողմից, ինչ տեսակի գույք և դրանով ինչ վնաս է պատճառվել պետությանը կամ կազմակերպությանը:

- 1999 թվականից սկսած մինչ 2016 թվականն ընկած ժամանակահատվածում Ծաղկուտ համայնքապետարանի կողմից ֆինանսական խախտումներ թույլ տրվել են թե ոչ, եթե այո, ապա, ինչ խախտումներ են թույլ տրվել, երբ, ում կողմից, ինչ չափով, դրանց արդյունքում քաղաքացիներին, պետությանը կամ համայնքին վնաս պատճառվել է, թե ոչ:

- Ծաղկուտի համայնքի բնակիչների կողմից վճարված գույքահարկի և հողի հարկի գումարները սահմանված կարգով համապատասխան բազա մուտքագրվել են, թե ոչ, եթե ոչ, ապա ինչպիսի խախտումներ են թույլ տրվել, երբ, ում կողմից, ինչ չափով, դրանց արդյունքում քաղաքացիներին, պետությանը կամ համայնքին վնաս պատճառվել է, թե ոչ:

-1999 թվականից սկսած մինչ 2016 թվականն ընկած ժամանակահատվածում Ծաղկուտի համայնքապետրանի կողմից որքան և ինչպիսի գույք է աճուրդով օտարվել, աճուրդն անցկացվել է օրինական կարգով, թե ոչ, եթե թույլ են տրվել խախտումներ, ապա դրանց արդյունքում քաղաքացիներին, պետությանը կամ համայնքին վնաս պատճառվել է, թե ոչ:

-1999 թվականից սկսած մինչ 2016 թվականն ընկած ժամանակահատվածում, ինչ աշխատակիցներ են ընդունվել համայնքապետարանում աշխատանքի, նրանցից քանիսն են գնացել ֆիզ. արձակուրդ, այդ կապակցությամբ որքան գումար է դուրս գրվել բյուջեից, ֆինանսական ձևակերպումները կատարվել են ճիշտ, թե ոչ, եթե թույլ են տրվել խախտումներ, ապա դրանց արդյունքում քաղաքացիներին, պետությանը կամ համայնքին վնաս պատճառվել է, թե ոչ:

1999 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 58 հրամանով գրադարանավար է նշանակվել և մինչև 2008 թվականի հունվարի 3-ը նշված հաստիքում աշխատել Լենա Հակոբյանը

- նույն ժամանակահատվածում Ծաղկուտ համայնքը ի՞նչ տեսակի և ի՞նչ քանակի գույք է ունեցել, ովքե՞ր են հիմնականում օգտվել գրադարանի ծառայություններից, գրքային ֆոնդ համայնքը ունեցե՞լ է, թե՞ ոչ, այդ ամենի կապակցությամբ ի՞նչ փաստաթղթեր կան համայնքապետարանում,

- որքա՞ն է կազմել Լենա Հակոբյանի և նրա ընտանիքի անդամների կողմից հողատարածքների օգտագործման համար համայնքի բյուջե կատարվող վճարների չափը, այդ գումարներն իրականում համայնքի համապատասխան բազա մուտքագրվե՞լ են, թե՞ ոչ, հարկերի մասով վերջինները համայնքին պարտավորություններ ունե՞ն, թե՞ ոչ:

- 2008 թվականից սկսված մինչև ե՞րբ է Հոռոմ Թորոսյանի անվամբ ելքագրվել աշխատավարձի գումարներ, ի՞նչ չափով:

- որքա՞ն է կազմել Հոռոմ Թորոսյանի և նրա ընտանիքի անդամների կողմից հողատարածքների օգտագործման համար համայնքի բյուջե կատարվող վճարների չափը, այդ գումարներն իրականում համայնքի համապատասխան բազա մուտքագրվե՞լ են, թե՞ ոչ, հարկերի մասով վերջինները համայնքին պարտավորություններ ունե՞ն, թե՞ ոչ:

- գյուղապետի տեղակալ Լուսինե Հովակիմյանը պաշտոնին նշանակվել է օրենքով սահմանված կարգո՞վ, թե՞ ոչ,

-Արզուման Կարախանյանի պաշտոնավարման ընթացքում երբևէ համայնքի ավագանու որոշմամբ ու՞մ, ի՞նչ պարգևատրումներ են կատարվել, ի՞նչ հիմնավորումներով և ի՞նչ նպատակներով, հիշյալ պարգևավճարները ստացած լինելու վերաբերյալ ի՞նչ հաշվապահական փաստաթղթեր կան համայնքապետարանում, այդ գումարները նպատակային օգտագործվե՞լ են, թե՞ ոչ:

- ի՞նչ եղանակով է ստացվել Սամվել Կարախանյանի աշխատավարձի գումարները՝ քարտայի՞ն, թե՞ առձեռն:

- գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործումից ե՞րբ և որքա՞ն գումարներ են մուտքագրվել համայնքի բյուջե,

- ո՞վ և ե՞րբ, ի՞նչ տարածքներ է վարձակալել, ի՞նչ արժեքով, այդ անձինք մրցույթի մասնակցե՞լ են, թե՞ ոչ, հողամասերը վարձակալությամբ ձեռք բերելու համար համապատասխան պայմանագրեր կնքե՞լ են, թե՞ ոչ:

3. Մասնագիտական ստուգումը կատարելու համար փորձագետներին ներկայացնել քրեական գործը և առգրավված փաստաթղթերը:

ՀԿԳ քննիչ՝ **Վ.Ղ.Մելքոնյան**